




Պ. ՄՈՒՐԱԿՅԱՆ

(Րաճասիրական գիտությունների
քննաձեռն)

ՀԱՅ-ՎՐԱՑԱԿԱՆ ԳՐԱԿԱՆ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՓՈԽՀԱՐԱՔԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ (Ս. ԳՐՈՑ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆԸ)

Ս. Գրոց հայերեն թարգմանության պատմությանը վերաբերող պատկառելի հայագիտական գրականություն կա: Սկզբնաղբյուրների (Կորյուն, Խորենացի, Փարպեցի և այլք) ուսումնասիրությունը հավաստել է, որ Հին ու Նոր Կտակարանների տարբեր գրքեր հայացվել են ոչ միաժամանակ և ոչ եղակի աղբյուրից: Դժբախտաբար, առ այսօր անհնար է եղել զոյություն ունեցող բոլոր գրչագրերի հիմամբ ճշգրտել՝ մեղ հասած բնագիրը, քանի՞ խմբագրություն (—խումբ) է ներկայացնում և սկզբնական տեսքը վերականգնելու գործում նրանցից յուրաքանչյուրը ի՞նչ մասնակցություն կարող է ունենալ: Քանի գեո այս հարցը չի լուծված՝ դժվար է լեզվական-ոճաբանական, մանավանդ բառագանձային, հստակ կողմնորոշում ունենալ, առավել ևս՝ ճիշտ պատկերացնել 5-րդ դարի մշակութային ոչ համահարթ իրավիճակը, թեկուզ տեղական ավանդույթի, ասորա-արևելյան և հունական տարրերի բախումը, նոր վարդապետության տարածման ուղին և այլն:


Աստվածաշնչագիտությունը (բիբլիոլոգիան) վաղուց արդեն հավաստել է, որ սկզբնական տեսքի վերականգնման (կամ գոնե կոսման) ամենից հավաստի ուղին թարգմանության և նրա բնագրի կամ բնագրերի համադրական ուսումնասիրությունն է: Այսպես, օրինակ, ակադ. Ն. Մառի արդարացի համոզմամբ ս. Գրոց հայերեն և վրացերեն խմբագրության թարգմանություննե-

րը բացառիկ նշանակություն ունեն ասորական խմբագրության ուսումնասիրման համար, քանի որ վերջինս նույնպես մեղ չի հասել իր սկզբնական տեսքով: Մի ժամանակ ենթադրվում էր, թե կարելի է ս. Գրոց հայերեն թարգմանության պատմությունն ուսումնասիրել՝ առանց վրացերենի, ուրեմն և վրացերենն՝ առանց հայերենի: «Մինչև այժմ [ս. Գրոց] հայերեն թարգմանության սովորական բնագիրը, այսպես կոչված՝ վուլգատա, համարվում է 5-րդ դարի բնագիր, և նույն ժամանակով էլ պատրաստ են թվագրել վրացագետները՝ առկա վրացերեն թարգմանությունը, թեկուզ և հանձին մեզ հասած հնագույն գրչագրերի: Մինչև այժմ շարունակում է գոյատևել այն համոզմունքը, թե կարելի է լրացվել հայերեն բնագրի քննությամբ՝ առանց գիտենալու վրացերեն բնագիրը՝ իր բազմերանգ պատումներով, կամ ճշգրտել ս. Գրոց վրացերեն թարգմանվելու պատմությունը՝ առանց գիտենալու հայերեն պատման ու նրա բարդ պատմությունը»²:

Անցյալ տասնամյակներում վրացագետները տեական ու համակողմանի քննությամբ ըստ հնարավորի ճշգրտեցին վրացերեն առկա խմբագրությունները, մանավանդ «Խան-

¹ Н. Я. Марр, Заметки по текстам св. Писания в древних переводах армян и грузин, X. В., т. II вып. II, стр. 163.

² Н. Марр, անդ.



մետի» կոչվող կրկնագիր պատառիկների հայտնաբերումից հետո³ Ակադ. Կ. Կեկելիձեն ամփոփ քննությամբ պարզեց ս. Գրոց վրացերեն թարգմանության ժամանակամիջոցն ու սկզբնական բնագրի հետագա վերանայումները՝ ըստ Յոթանասնից բնագրի: Այժմ հայտնի է, որ սկզբնապես վրացերենի է թարգմանվել Նոր Կտակարանը, ավելի ճիշտ՝ Ավետարանը, որի մասին խոսվում է «Շուշանիկի վկայաբանության» վրացերեն խմբագրության մեջ: Ակադ. Ա. Շանիձեն 1945 թ. հրատարակեց Ավետարանի հնագույն երկու խմբագրությունները: Վրաց մատենագրության պատմության երկրորդ շրջանում (10—13-րդ դդ.) «հնում թարգմանված Ավետարանի բնագիրը կրեց հիմնական փոփոխություն: Քանի որ նշված խմբագրությունները, անկասկած, շատ բաներում տարբերվում էին այն ժամանակ Կ. Պոլսի եկեղեցում ընդունված խմբագրությունից, անհրաժեշտ են համարել մերձեցնել այդ խմբագրությունները հունարեն պատումներին»⁴: Այդ մասին ուղղակիորեն խոսվում է Գեորգի Սուրբսարեցու (թարգմանչի) հիշատակարանում, իբրև «խանմետի և սարածմիդյան», երկուսն էլ հնագույն խմբագրության: 11-րդ դարից սկսած Գեորգի Սուրբսարեցու խմբագրությունն ընդունվել է իբրև վրաց եկեղեցու վուլգատա: Նոր Կտակարանի գրքերից, ինչպես ապացուցված է, առաջին շրջանում թարգմանված չի եղել «Յայտնութիւն Յովհաննու»-ն և միայն 975—978 թվականներին է փոխադրվում՝ Եվթիմեոս Աթոնացու կողմից⁵: Ինչ վերաբերում է Հին Կտակարանին, ապա, բնական է, թարգմանվել է ոչ միանգամից, ոչ եղակի բնագրից: Մինչև 978 թվականի գրագիրը հայտնի են պատառիկներ տարբեր գրքերից՝ Մնունդք, Ելք, Մարգարեությունը և այլն: Մեղանում, հայ իրականության մեջ, Կորյունի վկայությամբ թարգմանությունն սկսել են Սողոմոնի և ուսուցիչների, թեև տողերիս հեղինակի համար խնդիրը տակավին հստակ չէ⁶: Մինչդեռ

վրաստանում, նորից Կ. Կեկելիձեի ապացուցմամբ, ամենից առաջ Սաղմոսները պետք է թարգմանվեն, «որովհետև հնում արարողության մեջ (ժամասացության), մինչև շարականային տարրի երևալը, Սաղմոսներն էին գերազանցում, ժամասացությունը մեծ մասամբ սաղմոսերգությունից էր բաղկացած»⁷: Գրագրերում այժմ առկա է Սաղմոսաց երեք հնագույն խմբագրություն⁸: Գրեթե նույն պատկերն է Մարգարեության գրքերի վերաբերմամբ (երուսաղեմյան գրագիր, օշկյան (Աթոնի), գելաթյան, ինչպես նաև՝ պատառիկներ «խանմետ» բնագրերում): Մի խոսքով ս. Գրոց հնագույն խմբագրությունները պահպանվել են հանձին հինգ գրագրերի, տարբեր ընդգրկմամբ՝ երուսաղեմյան, Աթոնի (Օշկի), Մցխեթի, մոսկովյան (հրատ.) և ջանաշվիլյան (Կ. Կեկելիձե, անգ.): Տվյալ գնալը 10-րդ դարից հետո կատարված վերախմբագրումներն ու վերաթարգմանությունները մեղ չեն հետաքրքրում, որովհետև բոլորն էլ Յոթանասնից հիմքի վրա են կատարված, բայց առաջին ըստ հունարենի:

Ս. Գրոց վրացերեն խմբագրության սկզբնական բնագրի հարցը տակավին վերջնականապես լուծված չէ: Ալտերի կարծիքով Յոթանասնից թարգմանությունն է: Այդ նույն տեսությունն են պաշտպանել և այլք՝ Բրոսե, Յագարեի, Խախանաշվիլի, Պալմեյ-րի, Ղաուխիշվիլի, Պրոֆ. Ֆ. Կոնիբիրր պաշտպանում էր ասորերենից թարգմանվելու տեսությունը: Գիտնականների մի այլ խումբ՝ Ն. Մառից սկսած, վրացերենի սկզբնական բնագիր համարում է հայերենը (Գուսեն, Կուզե, Յորդան, Բլեյկ, Բլագովերշենսկի): Բանը նրանում է, որ Հին կամ Նոր Կտակարանի այս կամ այն գիրքը քննության ենթարկելիս միևնույն բնագրում մասնագետները նկատում են մերթ երբայրենի, մերթ ասորերենի, մերթ էլ հունարենի կամ հայերենի հետքեր, այդ պատճառով էլ տակավին որևէ վերջնական եզրակացություն չի կարելի անել: Որքան էլ հիմնավոր են Մառի գրությունները հայերեն բնագրի վերաբերմամբ, նրանք չեն ամփոփում ողջ ս. Գրոց ընձեռած տվյալները, իսկ այս կամ այն հատվածից բխող եզրակացությունը դժվար է տարածել ամբողջ 49 մասերի վրա: «Այս խնդրի գիտական լուծման համար անհրաժեշտ են հետևյալ պարագաները. 1) հին, դասական վրացերենի հիմնավոր խմբագրություն, ինչպես նաև՝ երբայրենի, ասորերենի, հայերենի և

³ Իվ. Զավախիշվիլի, Վրացական նորահայտ հնագույն ձեռագրերն ու նրանց նշանակությունը գիտության համար («Վրաց հնագրություն» 1949, էջ 274—366):

⁴ Կ. Կեկելիձե, Վրաց մատենագրության պատմություն, I, 1960, էջ 413:

⁵ Հմմ. Կ. Կեկելիձե, նշվ. աշխ., էջ 415: Գիտական հրատ., տե՛ս. Վրաց հին լեզվի ամբիոնի աշխատություններ, № 7, 1961 թ. (հրատ. Ի. Իմնախիշվիլի):

⁶ Հմմ. Պ. Մառադյան, Հայ-վրացական գրական-մշակութային փոխհարաբերությունների պատմությունից, («Տեղեկագիր», 1964, № 10, էջ 61—62, ծան. 37):

⁷ Կ. Կեկելիձե, նշվ. աշխ., էջ 416:

⁸ Սաղմոսաց հին վրացերեն խմբագրությունները, հրատարակեց Մգեբալա Շանիձեն, Բր., 1960 թ.:

հունարենի, 2) ամենևին անկարելի է այս կամ այն բնագրի հետ համեմատելիս առաջնորդվել միայն տպագրի բնագրով, լինի այն վրացական թե օտար: Բայց նրանում է, որ վրացական կամ օտար ս. Գրոց տպագիր բնագիրը անփոփոխ չի պահպանել այն բնագիրը, որը կամ որից սկզբնապես թարգմանել են ս. Գիրքը մեր նախնիք: Մենք հաստատապես գիտենք, որ հետագա դարերում վրացերեն, ասորերեն և հայերեն ս. Գրքերը ոչ եզակի անգամ են ճշգրտվել ըստ հունական բնագրի, հետևաբար մեթոդապես ճիշտ չի լինի, եթե այժմյան քանիցս ճշգրտված վրացերեն բնագիրը մենք բաղդատենք հնագույն ասորական-հայկականի հետ կամ հակառակը՝ այժմյան ասորերեն-հայերենը համադրենք հնագույն վրացական բնագրին: Մենք պետք է ձեռքի տակ ունենանք հնագույն, եթե ոչ սկզբնական՝ նրան գոնե մերձ, բնագրեր, հնարավորին չափ բնական հրատարակությամբ, այս պայմաններում համեմատություն էլ գիտական և մեթոդապես բնագույնի կլինի⁹: Ինքնին հասկանալի է, որ ողջ բնագրի համեմատությունը չափազանց տևական ժամանակ է պահանջում, իսկ քանի որ ս. Գրոց հայերեն և վրացերեն խմբագրությունները դեռևս վերջնական բնական հրատարակություն չունեն (խոսքը ամբողջության մասին է), ուրեմն այս կամ այն հատվածից բխող եղրակացությունը չի կարելի ընդհանրացնել, այլապես թյուր հետևություն կարվի: Խնդիրը բարդանում է և նրանով, որ ս. Գրոց թարգմանության բնագրի հարցը դադարում է զուտ անքստաբանական հետաքրքրություն ներկայացնելուց և մշակութային-պատմական խոշոր արժեք ստանում: Այդ դեպքում անհրաժեշտ կլինի հավաստել, օրինակ, վրաց, հայոց և ասորական եկեղեցիների փոխհարաբերությունը, քրիստոնեության մուտքի ճանապարհն ու արձագանքները, իսկ այս ամենը տվյալ ժողովրդի պատմության որոշակի շրջանի պատկերն է ներկայացնելու՝ մշակութային-գաղափարական առումով: Ուստի միանգամայն բնական է գիտական այն պահանջը, որ ս. Գրոց վրացերեն խմբագրության ուսումնասիրության համար առաջադրում են ակադ. Կ. Կեկելիձեն և Ա. Շանիձեն¹⁰: Գիտականները մատնանշել են մի շարք լեզվական-բառազանձային և խմբագրական իրողություններ, որոնք անմիջական

նորեն վերաբերում են ս. Գրոց ասորա-երբայական խմբագրություններին: Եթե ձեռքի տակ ունենալինք սկզբնական շրջանի հայերեն բնագիր, ապա թերևս հնարավոր կլինի ճշտել այդ իրողությունների հարաբերությունը մեր հնագույն բնագրին, որտեղ, բացառված չէ, կարող էին նրանք արտացոլված լինել: Այնուամենայնիվ, անժխտելի փաստ է, մեզ հասած հնագույն վրացերեն խմբագրություններում պահպանվել են նշանակալի հայկաբանություններ, որոնք երկակի հետաքրքրություն են ներկայացնում:

ա) Հավաստում են վրացերեն խմբագրության տունությունը հայկականին, մի բան, որ բխում է 4—7-րդ դարերի հայ-վրացական եկեղեցական փոխհարաբերությունների ողջ ուղի, սիրո-պաղեստինյան թևին ունեցած ընդհանուր առնչությունից:

բ) Նպաստում են կոհսելու հայկական սկզբնական խմբագրության մոտավոր տեսքը, գոնե բառադանձի առումով, ավելի ճիշտ՝ հավաստում են առկա բնագրի ուղ շրջանի պատկանելը, գոնե ոչ վաղ 6—7-րդ դարերից (ավելի հավանական է՝ 8—9-րդ դդ.)

Ստորև բերում ենք մի քանի օրինակներ.

Ս. Բագ. Ա., 11

...Եթէ հայելով հայեսցիս... դիս. և տայես աղախնոյ բում զուակ տոն, տաց զնա նուէր ոտաջի քո մինչև ցօր մահուան իւրոյ. և դինի և արբեցութիւն մի՛ արբեցէ, և երկաթ մի՛ ելցէ ի գլախ ճորա:

... Ուկեթու խիլվիթ մոմխեղո մխեվալսա շենսա դա մցև մկուիգրի մամակացի գանդի-նաթնո իգի շեն ծինաշե մսախուրաց աղթ-բումխաղ զգեղմդև սիկուգիլիսա միսխա. Ղուինոյ մթովալթբիսայ գեմոյվե արա իխիլոս. դա մախուլիլ վարսմիրթայ արա ւաղ-վիդես քալսա միսսա¹¹:

Հայերենը ամբողջությամբ համապատասխանում է Յոթանասնից բնագրին (նաև՝ վրաց. բաբարյան հրատ.), մինչդեռ վրացական օշկյան գրչագիրը պահպանել է մեզ անհայտ հայկական խմբագրության կնիքը՝ հանձին «վարսավիթ» (բն. վարսամիրաց) հայկաբանություն: Եթե փորձենք վրացերենի հիմամբ վերականգնել առկա հայերենը, ապա «երկաթ»-ի փոխարեն պիտի ունենալինք «ածելի», ինչպես բառս գտնում ենք թիւք, Ը, 7, Դատ. ԺԶ, 17, Սաղմ. ՄԱ, 3, Դան. ԺԱ, 6 (ռուս. брѣтѣ): Բնականաբար պետք էր ավելացնել նաև վրացերենում պահպանված հայկաբանությունը «Վարսավիթաց» (վ-մ): Ուրեմն ընդգծված նախագա-

⁹ Կ. Կեկելիձե, նշվ. աշխ., էջ 422:

¹⁰ Տե՛ս վրաց ավետարանի երկու հին խմբագրություն, հրատ. Ակակի Շանիձե, Թբ., 1945 թ., էջ 07—011:

¹¹ Տե՛ս Н. Мара, նշվ. աշխ., էջ 164:



սությունը կլինեն «և ածելի վարսավիրաց մի ելցէ ի գլուխ նորա»¹²:

Ահա նման մեկ այլ օրինակ.

Ա. Բագ., ԱԱ, 4.

Եւ ասէ Սաւուղ ցկապարճակիրն իւր. մերկեա՛ (var. մերկա) զսուր քո և խոցեա՛ ղիս նովաւ. գուցէ գայցեն անթլապատքն և խոցոտիցեն ղիս...

Դա հրքուա սառլ մենիչոքեսա թուխսա: Իխաղե մախուրի դա մոմկալ մե նու ուկուե մովիգեն ծինաղաուցունթելնի դա մոմկլան մե...

Ն. Մառը մանրամասն քննել է նշյալ պարբերությունը¹³ և ապացուցել, որ վրացերենի «մենիչոքեսա»-ն վրիպյալ է, փխ. «մենիչոքեսա», որ է հայ. «նժոյգ» (գուցե և նժորգ), և այդտեղից էլ հայերենում սպասելի էր «նժուգակալ», մի բառ, որի մասամբ աղավաղյալ ձևը հավաստված է Ս.-Ս. Օրբելիանի «Բառգրքում» («նիժորգա[կա]լի, ն. Մառ): Տվյալ դեպքում ուշագրավ է և այն, որ վրացերեն այլ խմբագրության մեջ ևս հայկաբանություն է պահպանված՝ հանձին «մեկապարճեա»-ի, որ է «կապարճակիր»: Նշանակում է՝ եղել է սկզբնական հայերեն մի խմբագրություն, ուր «և ասէ Սաւուղ ցկապարճակիրն իւր...»-ի փոխարեն եղել է «և ասէ Սաւուղ ցնժուղակալն իւր»¹⁴:

Բ. Բագ. ԻԴ, 9

... Եւ եղև Իսրայէլի ութ հարեւր հազար արանց ղօրու սուսերամերկաց, և այր Յուդայ հինգ հարիւր հազար արանց մարտկաց:

Դա իղո ըրցիտի իգի երիսայ միս իսրաէլիսայ վիթար ցխրաս աթաս կաց սպարազեն, դա իուդայսի ըշեուլի կացի սպարազենի օթխաս աթաս կաց սպարազեն¹⁵:

Վրացերենում, իբրև ուղղակի հայկաբանություն, պահպանված է «սպարազեն» բառը, երիցս կրկնված, սակայն առկա հայերենում բառիս դիմաց ունենք «սուսերամերկ» և «մարտիկ», ինչպես և վրացական հետագա խմբագրությունում (համապատասխան Յոթանասնից բնագրին): Բնականաբար հարց է առաջանում՝ երբևէ գոյություն է ունեցել վրացերենին համապատասխան հայերեն խմբագրություն, որից և թարգմանված լի-

ներ: Ակադ. Ն. Մառը բառիս կապակցությամբ գրում է. «վրացական պատումը, չնայած նրա՝ Հայաստանի համար խորթ լեզվին, ներկա դեպքում, հարկավ ոչ եղակի, արտացոլում է նրա (Հայաստանի—Պ. Մ.) հին. բայց կենդանի առօրյա լեզուն, այն դեպքում, երբ՝ մեզ հասած հայերեն պատումում տիրում էր խուց քաշված աշխատողի (իմա թարգմանչի կամ սրբագրչի—Պ. Մ.) անկենդան սխուլաստիկ ոգին՝ հեռու նախնի կենցաղից և իրեն ժամանակակից իրականությունից՝ նրա առօրյա լեզվից»¹⁶: Պիտի ենթադրել, որ սկզբնական թարգմանության ժամանակ կենդանի խոսակցական լեզվի աղղեցությունը շատ ավելի մեծ է եղել, քան հետագա խմբագրություն-սրբագրություն կատարելիս, թեև ներկա դեպքում դժվար է պնդել, թե 5-րդ դարի հայոց խոսակցական (=գրական) լեզվում «սուսերամերկ»-ն ու «մարտիկ»-ն ավելի քիչ գործածական են եղել, քան «սպարազեն»-ը (тяжело вооруженный): Խնդիրը այդ չէ, այլև այն, որ վրացերենի բնագիր հայերենը (այս դեպքում) այսօր գիտությունը անհայտ է: Եթե պայմանականորեն առկա հայերենը վերականգնենք ըստ վրացերենի, ապա պիտի ունենանք.

«... Եւ եղև Իսրայէլի [թին իբրև] ինն հարեւր հազար արանց ղարու սպարազէլ, և այր [ընտիր] Յուդայ[ի] շուրս հարեւր հազար սպարազեն»¹⁷:

Մենք նշեցինք, որ հիման վերականգնումը պայմանական է, այնուամենայնիվ կարելի է հավաստիանալ, թե առկա հայերենը ինչ չափով է հեռացել իր սկզբնական բնագրից՝ հավանաբար ոչ եզակի անգամ համեմատվելով հունական Յոթանասնից բնագրին: Բայց ներկա դեպքում հունական խմբագրությունը ևս ստուգելու չափանիշ չէ, որովհետև աստվածաշնագիտությունը հավաստել է, որ նրանում ևս հետագա վերանայման կնիք կա և, որ գլխավորն է, 4—5-րդ դարերում հունարեն ս. Գիրքը ևս մի քանի խմբագրություն է ունեցել՝ ա) պաղեստինյան, բ) անտիոքյան-կոստանդնուպոլսյան, և գ) աղեքսանդրյան: Յոթանասնից վերականգնումը հնարավոր է դիտվում նշված երեք խմբագրությունների հիմամբ: Ուստի սկզբնական հայերենի (և վրացերենի) տեսքը ճշտելիս Յոթանասնիցը բացարձակ չափանիշ չի կարող լինել: Դեռ հայերենի և վրացերենի միջոցով պետք է ճշտել ասորականը, ըստ վերջինիս՝ եբրայերենը և նոր միայն հունական Յոթանասնիցը քննել:

¹² Անոյ.

¹³ Բաց ենք թողնում վերջին արտահայտության մեջ եղած «այր» և «սպարազեն» բառերի կրկնությունը:

¹² Ա. Բագ. ԱԱ, 4-ի վրացերեն «մախուրի»-ի դիմաց հայերենում ունենք «սուր», որ ուղիղ համապատասխանությունն է:

¹³ Նշվ. աշխ., էջ 166:

¹⁴ Ս.-Ս. Օրբելիանի մոտ «նժոյգ» բառից ունենք՝ մենիչոքե, նիժորգալի, նիչոքե և նիժուգ (Հատ. IV (1), էջ 468, 596):

¹⁵ Տե՛ս Н. Марр, նշվ. աշխ., էջ 167—168:

Վերջերս երիտասարդ վրացագետ Կ. Դանելյան մասնագիտորեն զբաղվեց Երեմիայի մարգարեության («Գիրք Երեմիայ Մարգարեի») վրացերեն հին խմբագրությունների ուսումնասիրմամբ¹⁸ (երուսաղեմյան, օշկյան (աթոնյան) և դելաթյան գրչագրեր)։ Պարզվում է, որ վրացերենում կան ուղղակիորեն եբրայերենից եկող նշանակալի տեղիներ, որոնք չեն կարող բացատրվել ոչ տոկոս հունարենով և ոչ էլ հայերենով (ԽԸ, 34, ԼԱ, 39, ԽԸ, 31, ԻԱ, 23 և այլն)։ Նույն տեքստում կան տեղեր, որոնք բացատրվում են միայն հունարենով։ Օրինակ. հայ «ի ձորն Կեղրօնի» դիմաց (Երեմիա, ԼԱ, 40) վրացերենում առկա է՝ «խեղամգե նաձու-թաղ», հուն. «ὥς Νέχρι. Κεῖνον»՝ Հունարենի «Νέχρι»-ը պահպանել է եբրայերենի «նախալ» բառը («ձոր», «վոր»), սխալմամբ իբրև հատուկ անուն ընկալելով¹⁹, հետևաբար հայերենն ու վրացերենը այդ բառը թարգմանելիս իբրև բնագիր են ունեցել որևէ այլ տեքստ, բայց ոչ սեպտանտան, իսկ եթե հունարեն է եղել, ապա աղբյուրանոցային պատումը, որ Νέχρι-ի փոխարեն չէլիշտ է («ձոր», «վոր»)։ Բայց նույն արտահայտության «նաձութաղ»-ը վրացերենում ուղղակիորեն բխում է հունարենից՝ Κεῖνον հատուկ անունը ընդունելով իբրև Դ. չեճոճ-ուն չեճոճ հոգն. սեռ.) այսինքն՝ եղևնի Ուրեմն նույն արտահայտության մեջ երկու բառերից մեկը կարող է արևելյան (եբր. աս., հայ.) աղբյուր ունենալ, մյուսը՝ հունարեն։ Այս եզակի օրինակն իսկ բավական է ս. Գրոց թարգմանության պատմության հետ կապված հարցերի չափազանց բարդ լինելը հավաստելու համար։

Հայերեն և վրացերեն խմբագրությունները միմյանց մերձեցնող պարագաներից մեկն էլ այն է, որ այստեղ կան այնպիսի բառեր ու արտահայտություններ, ինչպիսիք չենք գտնում ասորերենում կամ հունարենում (օրինակ՝ Եսայի, Ե, 28, Մ 14)։ Այլ դեպքերում (է, 26, է, 13) վրացերենը հետևում է եբրայերենին, հայերենը՝ հունարենին և ասորերենին։

Վրացերենում պահպանված հայկաբանությունները կարելի է բաժանել երեք խմբի.

¹⁸ Կ. Դանելյան, Երեմիայի Մարգարեության հին վրացերեն պատմությունը և նրանց ընդգրկ հարցը (Վրաց հին լեզվի ամբիոնի աշխատություններ, № 9, Թբ., 1964, էջ 159—184)։

¹⁹ Տե՛ս Կ. Якимов, Отношение греческого перевода ЛXX к еврейскому мазоретскому тексту в книге пророка Иеремии. СПб., 1874. стр. 201, հմմ. Կ. Դանելյան, նշվ. աշխ., էջ 169—170։

ա) Բառադարձություն. բացի նշված օրինակներից հմմ. նաև՝ ստրուկ, վախճան, կապարճ, բաղին, դահիճ, կնդրուկ, զոհել, մատակարար, բօթ, բորբոքել, խորշ, ավաղան, ջրմուղ, դալուկ, ստև և այլն։

բ) Պարզված բարանական-ոճաբանական նուիրելիք նուէր—ուղորվիղես սաղորվեսաւ։ Սկզբնական հայերենում, դատելով վրացերենից, պետք է լինե՛ր՝ «զոհս զոհէին»։

Դու խնդրես քեզ մեծամեծս.— Դիդ-դիդսա (պատճենում է հայերենի բառակազմությունը)։

Սինչև ի վախճան մետասաներողի և մին—միադասարուլամդե։

Ի վերայ տեառն մեծաբանեաց— մդիդրադ իտղողա²⁰։

գ) Քերականական

Դու շեն, Բեթլեմդ, քուղաճայ իուղայսի... առկա հայերենում՝ եւ զու Բեթղաճէմ երկիր յուղայ... (Մատթ., Բ, 6)։ Վրացերենում, անկասկած, պահպանվել է եբրեմի հայերեն բնագրի «դ» դիմորոշ հոգը, որ ներկա մեր տեքստերում չկա։ Վրացի թարգմանիչը թե սրբագրիչը ձեռքի տակ եղած հայերեն բնագրի «դ»-ն (Բեթղաճէմդ) հատուկ անվան մաս է կարծել և նույնություն մի փոխանցել։ Ներկա դեպքում տառս վրացերենում ոչ մի իմաստավորում չունի (այլ պարագայում կարող էինք ընդունել իբրև ուղղություն ցույց տվող վերջածանց՝ դեպի Բեթղաճէմ)։ Նշանակում է վստահորեն կարող ենք ենթադրել, որ 5—6-րդ դարերի հայերեն սկզբնական տեքստում (resp. տեքստերից մեկում) առկայված թողը եղել է այս տեքստով՝ եւ զու, Բեթղաճէմդ, երկիր Յուղայսի²¹։

Համառոտակի՝ այս է ս. Գրոց որոշ գրքերի համեմատության արդյունքը։ Վերջնական

²⁰ Օրինակները վերաբերում են՝ Եսայա Մարգարեության (տե՛ս Կ. Դանելյան, նշվ. աշխ., էջ 178)։

²¹ Ավելորդ չէր լինի նշել, որ վրացերենում իբրև հայկաբանություն պահպանված որոշ բառեր կարող են հավաստի աղբյուր լինել 4—5-րդ դարերի հայերենի նշյունաբանության հետ կապված որոշ հարցեր քննելիս. այսպես, օրինակ, հայ «բաթ» (բոթ) բառը վրացերենում տարադարձված է ոչ թե «բոթ»-ի (ռ=օ), այլ «բաթ»-ի, իսկ այդ նշանակում է, որ «առ» կապակցության մեջ Վ հնչումն ավելի նկատելի է եղել, քան մի այլ երանգի, մանավանդ որ հակառակ դեպքում վրացերենն ուներ Վ-ի ճիշտ համապատասխանություն՝ հանձին ՈՒ կաղմող երկրորդ տառանիշի։ Նույն երևույթն է և իւ-եւ կապակցությունների դեպքում (հմմ. Պ. Մուրադյան, Հայ-վրացական դրական-մշակութային փոխհարաբերությունների պատմությունից, «Տեղեկագիր», 1964, № 10, էջ 68, ծան. 47)։ Ունենք և այլ նյութեր։



որևէ եզրակացության համար, ինչպես արդեն նշեցինք, անհրաժեշտ է բազմաթիվ թյուրմար քննել ողջ տեքստը՝ հանձն առնել վաղ խմբագրությունների: Ակադ. Ն. Մառի իր ձեռքի տակ եղածն արդեն բավարար էր համարում եզրակացնելու: Յեթն մենք ձեռքի տակ ունենալինք հայկական սկզբնական թարգմանությունը, ապա մի ավելորդ առիթ կունենալինք շոշափելիորեն ցույց տալու ս. Գրոց առաջին թարգմանությունները Վրաստանում և Հայաստանում՝ ասորերեն» հայերեն» վրացերեն»²²: Ընդհանուր առմամբ Մառի այս դրույթը կարող է և վերջնական ու միակ ճիշտը դառնալ, բայց միայն այն բանից հետո, երբ ուսումնասիրված կլինի ամբողջ տեքստը՝ ըստ այլալեզու խմբագրությունների: Ս. Գրոց թարգմանության պատմությանը զբաղված մասնագետներից ոչ ոք չի ժխտել Ն. Մառի հիմնավորումները, բայց արդարացիորեն նկատել են, որ նման անվերապահ եզրակացության համար դեռ շատ անելիք կա: Դեռ պետք է հստակել՝ հայերենը կամ վրացերենը վերանայման քանի՞ շրջան է ապրել, երբ, ի՞նչ լեզուների համեմատությունում, ըստ այնմ էլ հստակել հայերեն և վրացերեն բնագրերի մերձության սկզբնապատճառը: Դա եղել է թարգմանություն հայերենից, թե՞ սրբագրություն ըստ հայերենի: Դժվար է ենթադրել, թե վրացի թարգմանիչները միաժամանակ ձեռքի տակ ունեցել են մի քանի բնագիր՝ եբրայերեն, հունարեն, ասորերեն, հայերեն և ըստ բաղդատության թարգմանել: Այդ դեպքում չէինք ունենա գրչական-գրաֆիկական այն վրիպում-հեռացումները, որ առկա են բնագրում՝ մերթ ըստ եբրայերենի, մերթ ըստ հունարենի և մերթ էլ ըստ հայերենի: Բնագրերից մեկը կարող էր կանխել մյուսի ոչ հստակ ընկալումը, մանավանդ չէր լինի քերականական հունարանություն կամ հայկաբանություն: Բնական է ենթադրել, որ սկզբնաղբյուրային շերտավորումը տեղի է ունեցել աստիճանաբար, թարգմանությունը վերահամեմատելու և սրբագրելու ընթացքում: Թե՛ հայերենը այդ ընթացքի որ օղակն է՝ այսօր դժվար է ասել: Համեմայն դեպս ենթադրելի է, որ եբրայերեն-ասորերենի հիմամբ թարգմանվածը հազիվ թե սրբագրվեր ըստ հայերենի, որովհետև հայերենն ինքն էլ պիտի սրբագրվեր ըստ այդ բնագրերի, ապա և ըստ հունարենի: Նշանակում է՝ հավանական է կարծել, որ վրացերենի առնչությունը հայե-

րեն բնագրին թարգմանության վաղ շրջան պետք է ենթադրի, երբ հայ լիարգմանիչները տակավին չէին սրբագրել ըստ այլալեզու բնագրի, մանավանդ հունարենի: Ճիշտ չէր լինի կարծել, թե վրացերենի համար հունական բնագրի հիմամբ սրբագրելու անհրաժեշտություն առաջացավ հայ-վրացական եկեղեցական բաժանումից հետո, իբրև արդյունք այդ բաժանման: Դեռևս 5—6-րդ դարերում նման վերանայումը կարող էր միանգամայն բնական դիտվել և, եթե կուղեք՝ նույնիսկ անհրաժեշտ էր: Եթե Սահակն ինքր հայերենը վերանայում էր (և վերաթարգմանում) հունարեն օրինակից, ապա նույն պահանջը կառաջանար և վրացերենի վերաբերմամբ: Տվյալ դեպքում խնդիրը միայն հոգևոր-եկեղեցական միասնությունը չի վերաբերում, այլ նաև ս. Գրքի ընդունելի բնագիր ճշտելուն: Մի խոսքով՝ կարծում ենք, որ վրացերեն բնագրում պահպանած հայկաբանությունները սկզբնական շրջանի արդյունք պետք է լինեն, որոնք ինչ-որ չափով կպահպանվեն (և պահպանվել են) հետագա բոլոր վերանայումների ժամանակ: Վրաստանի մասին խոսելիս մեկ ուրիշ պարագա ևս պետք է նկատի ունենալ. երկրի արևելյան մասը քրիստոնեությանը հազորդակից դարձավ հայոց ճանապարհով՝ «via armeniac» արևմտյանը՝ Բյուզանդիայի: Գրիգոր Լուսավորչի և Նինոյի առաքելության բուն ուղիները, ավելի ճիշտ՝ նրանց անվան հետ կապված առաքելությունը, նման երկաթուղու է վկայում, եթե նկատի չունենանք այդ տարբեր ուղղությունները մի հայտարար բերելու հետագա մատենագրական-վարքաբանական փորձերը, առավել ևս՝ նրանցից որևէ մեկի բացառումը²³:

Նշանակում է՝ Վրաստանում կարող էր դուգահեռ կամ միաժամանակյա թարգմանության հնարավորություն լինել: Ոչ մի երաշխիք չկա պնդելու, թե և՛ արևելյան, և՛ արևմտյան Վրաստանը բառացիորեն նույն թարգմանությանն էին սպասում, ինչպես որ այդ ենթադրելի է Հայաստանի համար (Փոքր Հայքում հունական կողմնորոշումն ավելի ընդգծված պետք է լիներ): Հետևաբար մի տեղում կամ մի գրքի համար բնագիր կարող էր լինել հայերենը, իսկ մյուսում՝ հունարենը կամ հայերենի բնագիրը՝ ասորերենը: Ուրեմն տարբեր լեզուների կնիքը կարող էր գոյանալ հետագայում, արդեն առկա թարգմանությունները համեմատելիս, սեփական «վուլգատա» մշակելիս: Նման հնարավորությունը մենք բացառված չենք համարում նաև

²² Н. Марр, 2-й. а2-й., էջ 171, հմտ. նույնի Эчмиадзинский фрагмент древнегрузинской версии Ветхого Завета, X. В., том II, вык. III, стр. 378—388.

²³ Կարող է մասնապիտական քննության:

մեղանում: Չմոռանանք ասել, որ մատնանշված հայկաբանությունների մի մասը ամենայն հավանականությամբ տվյալ միջավայրի կենդանի խոսակցական լեզվում եղած իրողության արդյունք է՝ անշուշտ արեւելյան Վրաստանում: Հետադայում, գրոց լեզու դարձված վրացերենը ոչ միշտ կարող էր և պետք է հանդուրժեր խոսակցականի այդքան ուղղակի արձագանքը, ոչ քիչ բառեր կփոխարիներ ձևավորվող գրականով, ավելի ճիշտ՝ գրոց լեզվով:



Ոսկան Երեանցու հրատարակած Աստվածաշունչը (1666 թ.) մեծ տարածում ու ճանաչում է ունեցել ինչպես բուն հայոց, այնպես էլ այլազգյաց շրջաններում, որի լավագույն ապացույցը այդ հրատարակության արձագանքն է վրաց մատենագրության մեջ: 1936 թվականին պրոֆ. Ի. Աբուլաձեն հրապարակեց «Սուլխան-Սաբա Օրբելիանիի հայկական աղբյուրները» ուսումնասիրությունը, ուր առաջին անգամ քննության էր ենթարկվում Սաբայի ձեռքի տակ եղած հայկական աղբյուրների բնույթի հարցը, ելակետ ունենալով ինչպես հեղինակի հիշատակարանում եղած մատենացուցումները, այնպես էլ նրա աշխատության՝ «Վրաց բառգրքի» ընձեռնած փաստական նյութը²³, Պարզվում է, որ բացի հայկական «Բառգրքից» («Բառք բերթողականը») Սաբան ձեռքի տակ ունեցել է և Ոսկանի հրատարակած Աստվածաշունչը՝ հատուկ անունների ցանկն ու նրանց թարգմանությունը բառարան ներածելիս: Ինչպես հայտնի է, Ոսկանի Աստվածաշունչն ունի երեք ցանկ ա) Ցանգ վկայութեանց ի Քրիստոսէ և յառաքելոց ներ Նորում կտակարանում համառոտեցելոց ի հնոյն» (էջ 760—765), բ) «Եբրայեցւոց, Քաղգեացւոց և Յունաց անուանց թարգմանութիւն» (էջ 765—773), գ) «Ցանգ մատենական» (էջ 774—829): Պրոֆ. Ի. Աբուլաձեն գրում է. «Պարզվեց, որ հատուկ անունների ինչպես անվանակարգը, այնպես էլ նրա թարգմանությունը Սաբան վերցրել է ոչ թե հայերեն բառարանից, այլև հայերեն այն Աստվածաշունչից, որին առկից կա հատուկ անձանց մեկնություն, իսկ այս է՝ Ամատերդամում 1666 թ. տպագրված Ոսկանի Աստվածաշունչը, որը դադմատականի (իմա լատինականի) նմանողությամբ խմբագրած (իմա տնատած—Պ. Մ.) իր Աստվածաշունչը այլևայլ ցանկե-

րով է օժտել: Ի դեպ, այս ցանկերը հենց Ոսկանին են պատկանում և ոչ Ղազար Բարեղցուն, ինչպես այդ Մեսրոպ Տեր-Մովսիսյանն է պնդում: Որ Սուլխան-Սաբա Օրբելիանին իր բառարանի համապատասխան մասում Ոսկանի Աստվածաշունչի հատուկ անվանց թարգմանությունից է օգտվում՝ այդ է վկայում բառարանի համեմատությունը հայերեն նշված ցանկերի հետ: ... Ոսկանի ցանկի հետ համեմատելով՝ դրեթե լրիվ (սակավ բացառությամբ) համընկնում է: Ճիշտ այդ պատճառով էլ Սուլխանի «Վրաց բառգրքի» հատուկ անունները, և... իրենց մեկնությունների հետ միասին, թվում է, հիմնականում բխում են Ոսկանի Աստվածաշունչի համապատասխան ցանկից...»²⁴: Գիտնականի բերած օրինակները լիովին համոզել են: Ուրեմն 17—18-րդ դարերի վրաց նշանավոր բառարանագիրը աստվածաշնչական հատուկ անվանց անվանակարգն ու թարգմանությունը վերցրել է Ոսկանի հրատարակությունից (ցանկ Բ):

Ի թիվս Աստվածաշնչի վրացերեն բաղմաթիվ գրչագրերի, բանասիրությանը հայտնի է այսպես կոչված «մցխեթյան Աստվածաշունչը»²⁵, որ ուշ շրջանի գրչություն է, տնատված ու ցանկերով: Ժամանակին ենթագրվում էր, որ նշյալ ցանկերը Ս.-Ս. Օրբելիանիի ինքնուրույն աշխատանքի արդյունք են: Սակայն պրոֆ. Ի. Աբուլաձեի նշված հոգվածով ակնհայտ դարձավ, որ այստեղ առկա է ցանկերը ոչ թե ինքնուրույն աշխատություն են, այլև Ոսկանի հրատարակության համապատասխան ցանկերի թարգմանություն: Ի. Աբուլաձեն այդ կապակցությամբ գրում է. «Վրաց Աստվածաշնչի հատուկ անվանց ցանկը ևս թարգմանական լինելու նշաններ ունի, այն ևս, ինչպես հայերեն Աստվածաշնչի հետ համեմատությունը բացահայտեց, թարգմանություն է նույն հայերեն Աստվածաշնչի ցանկի»²⁶, Պարզվում է, որ Ս.-Ս. Օրբելիանիի «Մցխեթի Աստվածաշնչի» հատուկ անվանց ցանկերի միջև կան որոշակի տարբերություններ, իսկ այդ նշանակում է, թե նրանց թարգմանիչը նույն Սաբան չպետք է լինի, այլայպես բառարանի և ցանկի անվանակարգն ու մեկնությունը վրացերենում կհամընկներ: Վրացերեն Աստվածաշնչի ցանկերն ու համաբարբառը հայերենից թարգմանված լինելու մասին է խոսում Սաբայի ցուցումը. «վկայիր հայերենում»:

²³ Անդ, էջ 257—258:

²⁵ Վրաստանի ԳԱ Կ. Կեկելիձեի անվան ձեռագրերի ինստիտուտ, А—51:

²⁶ Նշվ. ախ., էջ 260:

²³ Թրիխսիի պետ. համալսարանի աշխատություններ, № 3, 1936 թ., հմտ. П. Мурадян, Армяно-грузинские литературные взаимоотношения в XVIII веке, Ер., 1966, стр. 133-143:

Այսպիսով, Ոսկանի Աստվածաշունչը սկզբնաղբյուր է եղել Սուլխան-Սաբա Օրբելիանի բառարանի համար և միաժամանակ թարգմանվել է վրացերեն՝ հանձին Մցխեթի գրչագրի ցանկեր-համաբարբառի։ Վերոհիշյալից բնականորեն պիտի եզրակացնել, ինչպես պրոֆ. Ի. Աբուլաձեն է հարցադրում, որ մցխեթյան գրչագրի տնատումն էլ կատարված է (խմբագրված) Սաբայի կողմից, կատարվել է ըստ հայերեն օրինակի, այլ կերպ դժվար կլինեք բազմաթիվ հղումներ ունեցող համաբարբառի գործնական բնույթն ըմբռնել տվյալ գրչագրի համար։ Լրացուցիչ վկայություններից մեկն էլ այն է, որ Սաբան ինքը հղում է, թե Եզրասի գրքերի I-ը

(վրաց.) համապատասխանում է II-ին (հայերենում), վր. II=Հյ. III, վր. III=Հյ. I-ին։

Սակայն դիտելու է, որ և՛ Սաբայի բառարանում, և՛ մցխեթյան գրչագրերում թարգմանությունը կատարված է որոշակի սկզբունքով, մերթ հավելելով, լրացնելով տվյալ բառահոգվածի բացատրությունը, մերթ էլ՝ կրճատելով այն։ Աստվածաբանության ու մատենագրության քաջատեղյակ Սաբան, իբրև աղբյուր ունենալով Երեմիայի հրատարակությունը, կարող էր և ընդարձակել և համառոտել բնագիրը, ինչպես և արել է, դատելով Ի. Աբուլաձեի կազմած աղյուսակից, իհարկե, չի բացառվում և լրացուցիչ այլ աղբյուր ունենալու։

